

գոյությամբ:

Արաքական համայարգին ընորոշ թիֆուրկացիայի /հայրական ու մայրական գծերի սահմանազատում/ և գծայնության /ուղղակի ու շեղակի գծերի սահմանազատում/ սկզբունքների հետևողականությունը հայոց ազգակցության համայարգում ունի հետևյալ պատկերը.

ա/ Այս սկզբունքները +1 սերնդում գործում են ամբողջությամբ, այսինքն՝ Ը-ի /այս անձնավորությունը, որից սկսվում է ազգակցության հաշիլը/ ծնողները և նրանց սիրելինգները /թույրերն ու եղբայրները/ տերմինարանորեն սահմանազատվում են: Վերջիններին համար գոյություն ունեն նկարագրական ու տարրական տերմիններ:

բ/ + 2 սերնդում ուղղակի գիծն առանձնանում է շեղակիից: Տերմինարանորեն սահմանազատվում են միայն ուղղակի գծի արյունակեցները, իսկ շեղակի գծերը ներկայացվում են նկարագրական կառուցվածքներով: Հայրական ու մայրական ուղղակի գծերը տերմինարանորեն միայն որոշ դեպքերում են սահմանազատվում:

գ/ 0-ական սերնդում տեղի է ունենում ուղղակի ու շեղակի գծերի առանձնացում: Ը-ի սիրելինգները տերմինարանորեն առանձնանում են հայրական ու մայրական գծով երկակի թույրերից ու եղբայրներից:

-1 աստիճանում նույնպես գործում է գծայնության սկզբունքը:

Ը-ի երեխաների համար գոյություն ունի հարուստ տերմինարանություն, որով նա տարբերում է նրանց իր սիրելինգների երեխաներից:

Թիֆուրկացիայի և գծայնության սկզբունքները ուղևանտ /էական/ են գոկարտիկ /դիմման/ և ոեֆերենտիկ /հիշատակման/ համակարգների համար:

3. Հայոց ազգակցության համակարգն իր գոյության ամբողջ ընթացքում երթևէ չի ընութագրվել հավայան ազգակցության համակարգի գծերում: Սա իր հնրիին ցույց է տալիս, որ հավայան ազգակցության համակարգն ազգակցության համակարգների էվոլյուցիայի անհրաժեշտ, պարտադիր օրակը չէ:

Ժ.Դ.ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀԱՀ

ԿԱՐԱԿԱԼԱՑԻ ՊԱՏԿԵՐՈՎ ԴԻՄԱՆԿԱՐԱՅԻ ԱՊԱԿԵ ՄԱՌԵՍԵՐ

1. Հայեական Միջազնության /Մծրին-Տիգրանակերտի շրջան/ Հայաստանի պատմության պետ. Թանգարան է ըերիլել երեք մեավոր ա-

նոթ, որոնք պատկերում են մորութափոր մարդու գլուխի: Դրանցից երկուսը սափորներ /Օյնխոյա/ են, իսկ երրորդն ավարտվում է վերևի մասում լայնացող պատկով /բարձ.¹ 17 սմ, պա. տր.² 6,2 սմ, հա. տր.³ 5 սմ: Երեքն ել փշված են նույն կաղապարի /եռափեղկ/ մեջ: Անոթները պատրաստված են ղեղականաշավուն, կսպավուն և մանուշակագույն անթափանցիկ հաստ պակալուց, հատակներին երկում ևն պորտի հետքերը /տր.⁴ 1,6 սմ/:

2. Անտիկ աշխարհում, մ.թ.ա. առաջին դարերում, լայն տարածում են ստանում զրոնզե, կավե և ապակե ծևավոր անոթները, բայց հազվադեպ է պատահում, որ դրանք ներկայացնեն կոնկրետ անժնավորություն: Ապակեզօրծության մեջ ճկավոր անոթների երկան գալը կսպաված է մ.թ.ա. I դարի վերջերին կատարված, ազատ փշելու եղանակի գյուտի հետ, երբ սկսվում է ապակեզօրծության ըուռն վերելքը: Այդ հայտնագործության ամենահավանական կենտրոնը համարվում է Սիրիան-Սիրիոնը, որին է վերագրվում նաև կաղապարի առաջին կիրառումը ապակեզօրծության մեջ:

3. Ամենահին ապակե դիմանկարը հանդիսանում է հոտալիայում գտնված, մ.թ. I դ. սկզբին պատկանող, օգոստոսի դիմանկարային պատկերը /բարձ.⁵ 4,7 սմ/, որը, սակայն, ծուլածո է: Հայտնի են նաև Պոմպեյի՝ նեզրերի և կանանց գլուխներ պատկերող սրվակները, որոնք մանրամասներով նմանվում են Լիվիային, գեպիից գտնված՝ Անտիոքի կերպարին քնդհանուր նմանություն ունեցող, երիտասարդ Դիոնիսին պատկերող անոթը /մ.թ. II դ. կիս/ և այլն:

4. Հայաստանի պատմության պետ. Թանգարանի՝ վերոհիշյալ մորութափոր մարդու դիմանկարն ունի կարակալա կայսեր՝ դրամներից և մյուս հուշարձաններից հայտնի, ընորոշ թուրո գծերը: Հոնքերի վրա ծանր կախված աղեղնամն կնմիռները, առաջ ցցված ծնոտը, կասկածոտ հայացքը, ամուր սեղմած շրթերը պատկերում են ուժեղ կամքի տեղ դաման մարդու, արտահայտում կերպարի ներքին լարվածությունը: Ճանր գլուխը նստած է հաստ վզի վրա: Գլխին կպած գանգուր մազերը շեշտում են դրա կլորությունը: Ապակե այս սըրվակները հանդիսանում են կոնկրետ անժնավորություն պատկերող դիմանկարային արվեստի եղակի օրինակներ: Կայսրն այստեղ ներկայացված է հասուն տարիքում, որը ցույց է տալիս դրանց պատրասման հավանական ժամանակը, այսինքն՝ պարթեական արշավանքներից հետո, 216 կամ 217 թ.: Կայսեր այս գավառային պատկերի մեկնարանությունը ժայնակցում է լուսվրի և նեապոլիտանական ազգային

Յանդարանի մարմարե ղիմապատկերներ ինչ:

5. Արվակէների ղիմանկարի գեղարվեստական արժանիքներն այնքան մեծ են, որ թույլ են տալիս մտածելու, թե կաղապարը պատրաստվել է կամ պրոֆեսիոնալ քանդակագործի կողմից, կամ վարպետն այն պատճենահանել է կայսեր մեզ անհայտ մի քանդակից: Ավելի հայանական է առաջին ենթադրությունը, քանի որ նարակալայի վերոհիշյալ հատկանիշներն արտահայտելու մաներան հաշված է հենց ապակու համար: Այս և տվյալ ոեգիոնի II - III դդ. մյուս գեղարվակները վկայում են տեղում ապակեգործական ար հետանոց լինելը, և, հարուստոր է՝ ոչ մեկ: Նշված սրվակները, Արտաշատից հայտնաբերված քառափեղկ կաղապարը, ինչպես նաև զուգահեռներ չունեցող տարբեր տեսալի այլ սրվակներ, վկայում են Հայաստանում ապակեգործության կարգացման ըարձր մակարդակը:

Ժ.Կ.ԽԱՅԱՏՐՅԱՆ
ՀԱՅԻ

ՄՄԴ-ՇԽԱՄԱՐՍԿԱՆ ԶՈՀԸ , , ՇԱՐԵՑԻՆ ՄՈՐՁՈՒՐ ,
ՊԱՐԵՐԳԻ ԱՌԱՆՑՔ ՃԵՍԻ ԽՍՍՏԱԲԱՍՈՒԹՅՈՒՆԸ
/ ըստ ազգագրական և քանահյուսական նյութերի /

1. Հայերի մեջ միջև օրս պահպանվել է մի ավանդություն, իստ որի կամուրջները, կամարները, տները, քերդերն ու պարիսպները կարող են ամրակուռ և անառիկ լինել, եթե դրանց մեջ ողջ ողջ մարդ /երիտասարդ աղջիկ, տղա կամ կին/ գմոնվի: 1985 թ. գրանցելով , , արեցին մորթուր , պարի մի տարբերակ ևս / շարժական, քանալոր, երածշալական տերստերով ու ծխակարգով /, խորանակով այդ շարքի ցնուռթյան մեջ / հմմտ. տակավին 1958 թ. Սրբ. Լիսիցյանի հրատարակած , , արեցին մորթուր , պարի հետ / համոզվեցինք, որ մարդ-շինարարական զոհը հայերի մեջ հինավուրց արմատներ է ունեցել:

2. Նոր տարբերակը մի անգամ ևս հաստատում է, որ , , արեցին, մորթուր,, քանահյուսական տերստ ոչ միայն երգվել, այլև պարի է: Պարագայլը երկուս զնալ, մեկ դառնալն է, ծելով՝ ծանր գյուղի լուսացե, մկուտախաղ: Քայլերի ու պարեղանակի որթմը $\frac{3}{4}$ է, տեմպը՝ դանդաղ: Տերստն ունի երկխոսության ձև զոհի և զոհաբերողի միջն՝ մեկը հայտարարում, մյուսը հաստատում է իրավիճակը: Տերստը լումուլյատիվ ընույթի է: Շարժա-